ԲԵԼԱՌՈՒՍԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի Հանրապետության վարչապետ Սերգեյ Սիդորսկուն՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանի ուղեկցությամբ:

Ողջունելով Բելառուսի Հանրապետության վարչապետի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռի հիմնադրման պատմությունը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց պետական մակարդակով հայ-բելառուսական հարաբերությունների առավել սերտացման ու զորացման առիթով՝ դրանք նկատելով բնական շարունակությունը հայ և բելառուս ժողովուրդների դարավոր բարեկամության: Հայոց Հայրապետն ի դեմս վարչապետի նաև շնորհակալություն հայտնեց Բելառուսի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ տածած ուշադիր և հոգատար վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ իշխանությունները զորակցություն ցույց կտան հայ համայնքին Բելառուսում հայկական եկեղեցու կառուցման գործում:

Բելառուսի Հանրապետության վարչապետը, ուրախություն հայտնելով հանդիպման համար, Նորին Սրբությանը ներկայացրեց Հանրապետության կրոնական խճանկարը: Վարչապետը հանգամանորեն անդրադարձավ Բելառուսում պետություն-Եկեղեցի հարաբերություններին՝ մեծապես կարևորելով Եկեղեցու դերը հասարակության հոգևոր զարգացման գործում: Պրն Սիդորսկին նաև շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ Բելառուսի նախագահին, իշխանություններին և ժողովրդին ուղղված ջերմ խոսքերի և բարեմաղթանքների համար:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, երկու երկրների դեսպանները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ